

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Բուենոս Այրես

Աստուծո ողորմությամբ բարեհաջող վերադարձանք Սուրբ Էջմիածին ձեր երկրից, ուր Մեր օրհնությունը բաշխեցինք Մեր հավատացյալ կավակներին ի Բուենոս Այրես և ի Կորդոբա: Այս առթիվ անհուն եղավ Մեր ուրախությունը և երախտագիտությունը՝ հաստատելով, թե ձեր եկեղեցիները և կրթական ու մշակութային հաստատությունները վայելում են ամեն օրինական և գործնական դյուրություններ ու քաջալերանք՝ ընծայված ձեր հայասեր երկրի պետական բարձր իշխանությանց կողմից:

Հույժ երջանիկ եղանք նաև, որ պատեհությունը ունեցանք անձամբ Մեր երախտագիտությունը և օրհնությունը ներկայացնելու Նորին Գերազանցություն Արգենտինայի Հանրապետության նախագահին, մեծահարգ նախարարներին, նահանգապետներին և քաղաքագլուխներին, որոնք այնքան ակնիվ զգացումներով դիմավորեցին ու հյուրասիրեցին Ամենայն Հայոց Հայրապետին:

Ջերմապես խնդրում ենք, որ պատեհ առիթով բարի լինեք Մեր շնորհակալ զգացումները և Մեր աղոթքները ներկայացնել պետական այս բարձր անձնավորությանց, որոնք այնքան ակնիվ և ուշադիր եղան Մեր հանդեպ:

Թող Տերը հավետ լուսառատ, հավետ ծաղկյալ և հավետ փառավոր պահպանի մարդասեր ու խաղաղասեր արգենտինյան մեծ հայրենիքը:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
22 հունիսի 1984 թ.